

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան, 5-րդ մայիսի, 2010թ.

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը, ի դեմս կանոնադրության հիման վրա գործող ռեկտոր՝ Ս.Զոլյանի,

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, ի դեմս կանոնադրության հիման վրա գործող ռեկտոր՝ Գ.Խաչատրյանի,

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, ի դեմս կանոնադրության հիման վրա գործող ռեկտոր՝ Վ.Գրիգորյանի,

Գավառի պետական համալսարանը, ի դեմս կանոնադրության հիման վրա գործող ռեկտոր՝ Ռ. Հակոբյանի,

ինչպես նաև ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման համագործակցության կոնսորցիումի ստեղծմանն ի նպաստ ստեղծված ներքոհիշյալ հուշագրի, «Կողմեր» համատեղ անվամբ հանդես եկող մասնակից բուհերը համաձայնության են եկել հետևյալի վերաբերյալ.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմերը պարտավորվում են Կոնսորցիումի շրջանակներում միավորել իրենց ջանքերը՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման ցանցային համագործակցության Կոնսորցիում (այսուհետ՝ ՀՀ ԼԿՑԿ) ստեղծելու.

բարձրագույն և հետրուհական համապատասխան մասնագիտական կրթության ոլորտում ընդհանուր նպատակներին և խնդիրներին հասնելու համար:

1.2. ՀՀ ԼԿՑՀԿ բուհերից ստեղծված Կոնսորցիումը իրավաբանական անձ չի հանդիսանում:

1.3. Կոնսորցիումի մասնակիցները գործում են կրթական, վարչական և այլ գործունեության ընթացքում Մասնակիցների կողմից կիրառվող մասնակից բուհերի բազմակողմանի և երկկողմանի համաձայնագրերի, գործող ՀՀ օրենսդրության, համաձայնագրի, իրենց կանոնադրության և բուհական կանոնակարգերի հիման վրա:

1.4. Սույն համաձայնագիրը Կոնսորցիումի մասնակիցների վրա ունեցվածքային ու ֆինանսական որևէ պարտականություններ չի դնում, ինչպես նաև իրենց կանոնադրության գործունեությունն իրականացնելիս չի սահմանափակում նրանց ինքնուրույնությունն ու ինքնավարությունը:

1.5. Համաձայնագրի շրջանակներում Կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ծանոթանալու համատեղ գործունեության իրականացման հետ կապված ողջ տեղեկատվությանը և փաստաթղթերին, ինչպես նաև Մասնակիցների ընդհանուր գործերի ղեկավարմանը:

1.6. Կոնսորցիումը բաց է այլ կազմակերպությունների համար՝ սույն Համաձայնագրի 5.1 կետով սահմանված կարգով:

2. ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կոնսորցիումի հիմնական նպատակը ՀՀ ԼԿՑՀԿ-ի որպես միջբուհական համագործակցության համակարգի ստեղծումն է՝ ուղղված հետևյալ նպատակների իրականացմանը.

- Լեզվաբարդաբանության և լեզվաբանական կրթության շարունակականության հայեցակարգի մշակում և ներդրում,
- ԲՈՒՀ-երի դասախոսական հանրության և այլ շահագրգիռ անձանց գործունեության ուղղորդումը հետևյալ ոլորտներում.
 - բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության ոլորտին վերաբերող համապատասխան առաջարկությունների մշակում,
 - պետական կրթական չափորոշիչների և շրջանավարտների պատրաստվածության մակարդակին ներկայացվող պահանջների նախագծերի մշակում,

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական պլանների և կրթական ծրագրերի բովանդակության օրինակելի ձևերի մշակում,
- բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթների մշակում և փորձաքննություն,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերի իրականացման որակի դիտարկում և վերահսկում,
- ուսումնական գործընթացի կազմակերպման, կադրային և մեթոդական ապահովման կատարելագործում,
- ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունակության զարգացմանն ուղղված մեխանիզմների ստեղծում,
- մասնակից բուհերի միասնական կրթական հորիզոնի ստեղծում՝ համատեղ կրթական ծրագրերի իրականացման և “միակցված” կրթության, միջբուհական համագործակցության նոր ձևերի կազմակերպման ճանապարհով,
- նպաստել ուսանողների երկխոսությանը, ազգային լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների պահպանմանը, դրա հետ մեկտեղ բազմալեզվության և բազմամշակութայնության ճանաչմանն ու տարածմանը, զարգացմանն ու հարստացմանը:
- ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ինտեգրումը միջազգային ակադեմիական հանրությանը:

2.2. կետում ներկայացված նպատակների իրականացմանն ուղղված՝ Կոնսորցիումի հիմնական խնդիրներն են.

- Լեզվաբանական կրթության ոլորտում պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ ԿԳՆ,
- Իր իրավասության շրջանակում մասնակցություն բարձրագույն և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների, ինչպես նաև շրջանավարտների պատրաստվածության մակարդակին, հիմնական կրթական և կամընտրական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող չափորոշիչների մշակմանը.

- Մասնակցություն նախնական, միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների մշակմանը բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին դրանց համապատասխանության ապահովման նպատակով,
- Մասնակցություն ԿԳԼ-ի, այլ նախարարությունների, ուսումնամեթոդական միավորումների կողմից հրատարակվող դասագրքերի և ուսումնական ծեռնարկների մշակման հեռանկարային պլանների կազմությանը, ինչպես նաև հեղինակային խմբերի ստեղծում՝ համապատասխան հրատարակումների պատրաստման համար:
- Կազմակերպում և մասնակցություն ուսումնական և մեթոդական գրականության, տեսալսողական միջոցների մշակման մրցույթներին, երաշխավորություններ՝ ԲՈՒՀ-երում լույս տեսած ուսումնական գրականության միջբուհական կիրառմանը:
- Ուսումնական գործընթացի կատարելագործմանն ուղղված հանձնարարականների մշակում, բարձրագույն և հետբուհական կրթության խնդիրների վերաբերյալ համաժողովների և խորհրդակցությունների, ուսանողական օլիմպիադաների ու մրցույթների անցկացում:
- ՀՀ ԿԳԼ-ի հանձնարարությամբ և իր իրավասությունների շրջանակում բուհերում ըստ մասնագիտական ուղղվածությունների մասնագետների պատրաստման հնարավորության լեզվական փորձաքննության իրականացում:
- Մասնակցություն պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման, թեկնածուական քննությունների օրինակելի ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
- Մասնակցություն բարձրագույն կրթության զարգացման հարցերով ծրագրերի պատրաստմանն ու փորձաքննությանը:
- Արտասահմանյան երկրների հասարակական-մասնագիտական կազմակերպությունների հետ կապերի հաստատում՝ ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերի շուրջ փորձի փոխանակման նպատակով:
- Համատեղ մասնագիտական ուղղություններով մագիստրոսների, ասպիրանտների և դոկտորների պատրաստում:
- Մասնակից բուհերի մագիստրոսների, ասպիրանտների և դոկտորների ակադեմիական շարժունակության զարգացում:

- Մասնակիցների կողմից համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացում:
- Համատեղ գիտական հետազոտությունների անցկացում, ատենախոսությունների, այլ հետազոտությունների համատեղ ղեկավարման ապահովում:

2.3. Ելնելով Կոնսորցիումի նպատակներից և խնդիրներից՝ սույն համաձայնագիրը սահմանում է Կոնսորցիումի մասնակիցների ընդհանուր խնդիրները: Մասնակիցների միջև գործառույթների հետագա բաժանումը կորոշվի առանձին համաձայնագրերով, որոնք կհամարվեն սույն համաձայնագրի անբաժանելի մասերը:

3. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

3.1 Համատեղ գործունեությանն ուղղված սույն Կոնսորցիումի շրջանակներում Մասնակիցների ներդրումները կարող են լինել՝

- Մասնակիցների նյութատեխնիկական ռեսուրսներ, այդ թվում համակարգչային սարքավորումներ, գրադարանային համալիրների հիմնադրամներ, տեղեկատվական համակարգեր և ցանցեր, տրանսպորտային միջոցներ, այլ շարժական և անշարժ գույքեր:
- Ուսումնամեթոդական նյութեր, կրթական գործընթացի ժամանակ ինտելեկտուալ գործունեության արդյունքներ և մասնակիցների բացառիկ իրավունքներ դրանց նկատմամբ, կրթական տեխնոլոգիաներ:
- Պրոֆեսորադասախոսական կազմի և կազմակերպության այլ աշխատակիցների՝ Կոնսորցիումի մասնակիցների մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ ուղղված մասնակիցների համատեղ գործունեության շրջանակներում ծրագրերի, նախագծերի, այլ միջոցառումների իրականացմանը:
- Կոնսորցիումի մասնակիցների գործնական համբավ, գործնական կապեր, կրթական, գիտական և նորարարական գործունեության մեջ կիրառվող փորձ:

3.2. Համատեղ գործունեությանն ուղղված Մասնակիցների ներդրումների կոնկրետ տեսակներ, դրանց գնահատականը:

Համատեղ գործունեությանը և այլ հարաբերություններին Մասնակիցների մասնակցության ձեերը սահմանվում և կարգավորվում են առանձին համաձայնագրերով, որոնք Մասնակիցների միջև կնքվում են սույն

Համաձայնագրի շրջանակներում՝ համատեղ գործունեության իրականացման պարագայում:

3.3. Կոնսորցիումի գործունեության ֆինանսավորման աղբյուրներն են.

- Մասնակիցների բյուջետային և արտաբյուջետային միջոցներ,
- Սիջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցներ,
- Ձեռնարկատիրական կառույցների կողմից կատարվող բարեգործական ներդրումներ,
- Կրթության դիմաց ստացված միջոցներ (Մասնակիցների կողմից սահմանված պայմաններով),
- Այլ աղբյուրներ:

4. ԿՈՆԱՌՑԻՈՒՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

4.1. Կոնսորցիումի մասնակիցների գործունեության համատեղ ղեկավարումն իրականացնում է Կոնսորցիումի համակարգող խորհուրդը (այսուհետ՝ «համակարգող խորհուրդ»), որի կազմի մեջ մտնում են Կոնսորցիումի Մասնակիցների բոլոր կազմակերպությունների ղեկավարները, կամ էլ նրանց կողմից նշանակված լիազոր ներկայացուցիչները:

Համակարգող խորհուրդը գործում է համակարգող խորհրդի վերաբերյալ Մասնակիցների կողմից սահմանված դրույթներով/ առանձին հավելված/:

4.2. Համակարգող խորհուրդը.

- սույն Համաձայնագրի շրջանակներում քննարկում է Մասնակիցների գործունեության կազմակերպմանն առնչվող հարցեր,
- հաստատում է Կոնսորցիումի գործունեության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր:
- լսում է համատեղ ծրագրերի, մշակումների, հետազոտությունների, այլ միջոցառումների այնպիսի նախագծեր, որոնցով հետաքրքրված են Մասնակիցները,
- առաջարկում է դրանք իրականացնել Մասնակիցների կողմից՝ առանձին կնքվող պայմանագրերի հիման վրա, լսում է դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններ,
- իր համաձայնությունն է տալիս այլ բուհերի, ֆակուլտետների, ամբիոնների, որպես նոր Մասնակից սույն Համաձայնագրին միանալու վերաբերյալ:

4.3 Օպերատիվ որոշումներ կայացնելու, Կոնսորցիումի բոլոր Մասնակիցների գործունեությունը համակարգելու, համակարգող խորհրդի ընդունած որոշումների կատարումը վերահսկելու, երրորդ անձանց մոտ Կոնսորցիումի շահերը ներկայացնելու համար Մասնակիցները 5 տարով բազային կազմակերպություն նշանակում են Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը:

4.4. Բազային կազմակերպության ղեկավարը կամ հավատարմագրով լիազորված անձը գլխավորում է համակարգող խորհրդը, ապահովում է դրա գործունեությունը, հրավիրում է համակարգող խորհրդի նիստ, նախագահում է, ստորագրում նիստերի արձանագրությունները, ինչպես նաև նամակները, դիմումները և Կոնսորցիումի այլ փաստաթղթեր՝ ձևակերպված համապատասխան համակարգող խորհրդի որոշումներին համապատասխան:

4.5. Բազային կազմակերպությունը, ի դեմս իր ղեկավարի, ներկայացնում է նաև Կոնսորցիումի շահերը ՀՀ պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ փոխհարաբերություններում՝ այդ պարագայում Կոնսորցիումի անունից ՀՀ ԼԿՑՀ-ի գործունեության հետ կապված պայմանագրեր, համաձայնագրեր, այլ փաստաթղթեր ստորագրելու իրավունքով:

4.6. Անհրաժեշտության դեպքում Բազային կազմակերպությունը հրավիրում է համակարգող խորհուրդ՝ Համաձայնագրի Մասնակիցների ոչ պակաս, քան 1/3-ի ներկայության դեպքում: Համակարգող խորհուրդը լիազորված է, երբ դրան մասնակցում են Կոնսորցիումի մասնակիցների կամ դրանց լիազոր ներկայացուցիչների գոնե կեսը:

4.7. Ցանկացած հարցերով համակարգող խորհրդի որոշումները կարող են ընդունվել նաև հեռակա քվեարկության ճանապարհով, եթե Կոնսորցիումի վերաբերյալ Համաձայնագրով կամ ՀՀ ԼԿՑՀ-ով այլ բան նախատեսված չէ:

4.8. Համակարգող խորհրդի բոլոր անդամները որոշումների կայացման ժամանակ ունեն հավասար քանակությամբ ձայներ:

4.9. Համակարգող խորհրդի որոշումները կայացվում են ձայների մեծամասնությամբ:

4.10. Համակարգող խորհրդի անդամների ձայների հավասարության դեպքում Բազային կազմակերպության ներկայացուցիչների ձայնը համարվում է որոշիչ:

4.11. Համակարգող խորհրդի նիստի կամ հեռակա քվեարկության արդյունքներով ձևակերպվում է արձանագրություն, որը ստորագրվում է Կոնսորցիումի Բազային

կազմակերպության ղեկավարի կողմից և ուղարկվում է Կոնսորցիումի բոլոր Մասնակիցներին:

4.12. Մասնակիցների շահերին և Կոնսորցիումի ստեղծման նպատակներին համապատասխանող կոնկրետ համատեղ նախագծերի, ծրագրերի, միջոցառումների մշակումն ու իրականացումը կատարվում է Մասնակիցների կողմից հատուկ ստեղծված և առանձին պայմանագրերի վրա հիմնված Աշխատանքային խմբերի կողմից՝ կազմված Մասնակիցների ներկայացուցիչներից և ղեկավարող Բազային կազմակերպության ներկայացուցչի կողմից:

5. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻՆ: **ՄԱՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5.1. Կոնսորցիումը բաց է 33 բարձրագույն ուսումնական հաստատությունների անդամակցության համար: Հաստատության Մասնակիցների կազմի մեջ մտնելու վերաբերյալ Կոնսորցիումի Մասնակիցների համաձայնությունն արտահայտող որոշումն ընդունվում է համակարգող խորհրդի ծայերի մեծամասնությամբ: Համապատասխան ընդունված որոշման՝ Բազային կազմակերպությունը բարձրագույն ուսումնական հաստատության անունով ուղարկում է անդամակցության հուշագիր և սույն Համաձայնագրի պատճենը:

5.2. Սույն Համաձայնագրի և բարձրագույն ուսումնական հաստատությունների միանալու պահ համարվում է Կոնսորցիումի 5.1 կետում նշված սույն Համաձայնագրի հուշագրի ստանալու պահը՝ ստորագրված նոր Մասնակցի կողմից, որի մասին Բազային կազմակերպությունը տասնօրյա ժամկետում տեղեկացնում է բոլոր Մասնակից բարձրագույն ուսումնական հաստատություններին:

5.3. Համատեղ նախագծերի և Կոնսորցիումի ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև դրա ղեկավարող մարմնի՝ համակարգող խորհրդի գործունեության հարցում Մասնակիցներն ունեն հավասար իրավունքներ:

5.4. Կոնսորցիումի Մասնակիցը դրանից դուրս գալու իրավունք ունի՝ Բազային կազմակերպությանն ուղարկելով գրավոր ծանուցում դուրս գալուց ոչ շուտ քան վեց ամիս առաջ, այնուհետև Բազային կազմակերպությունը գրավոր ծանուցումը ստանալու պահից տասը օրվա ընթացքում տեղեկացնում է բոլոր Մասնակիցներին: Կոնսորցիումից դուրս գալու դեպքում Մասնակիցը պարտավորվում է ամբողջությամբ

իրականացնել իր պարտականությունները՝ համաձայն համագործակցության արդեն գործող ծրագրի:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են բխել սույն Համաձայնագրից կամ կապված լինել դրա հետ, կորոշվեն Կոնսորցիումի Մասնակիցների միջև բանակցությունների միջոցով: Եթե համաձայն սույն կետի, Մասնակիցները չեն կարողանում գալ ընդհանուր հայտարարի, ապա բոլոր վեճերն ու տարաձայնությունները ենթակա են քննվելու դատարանում:

7. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն համաձայնագիրը Մասնակիցների համար ուժի մեջ է մտնում այն ստորագրելու կամ դրան միանալու պահից: Համաձայնագիրը գործում է 5 տարի՝ 2010 թվականի մայիսի 05-ից սկսած:

7.2. Սույն Համաձայնագրի վերաբերյալ փոփոխություններն ու հավելումներն ընդունվում են Կոնսորցիումի Մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.3. Ձևակերպված է Երևան քաղաքում՝ 2010թվականի մայիսի 05-ին՝ հայերեն, 5 օրինակով՝ ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Մասնակից բարձրագույն ուսումնական հաստատությունների անդամակցության մասին Գուշագրերը պահպանվում են Բազային կազմակերպությունում: Բազային կազմակերպությունն իր կողմից նշված հուշագրերի հավատարմագրված պատճենները ուղարկում է Կոնսորցիումի բոլոր Մասնակիցներին:

8. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՈՒՆԻՑ



ՌԵԿՏՈՐ՝ Ս. ԶՈՒՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՆՈՒՆԻՑ



ՌԵԿՏՈՐ՝ Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԳՅՈՒՄՐՈՒ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՆՈՒՆԻՑ



ՌԵԿՏՈՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԱՎԱՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՈՒՆԻՑ

ՌԵԿՏՈՐ՝ Ռ. ՀԱԿՈՐՅԱՆ



ուղղված Կոնսորցիումի վերաբերյալ Համաձայնագրին

Լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաբաղաբականության մշակման ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցային Կոնսորցիում ստեղծելու վերաբերյալ Համաձայնագրին բուհերի անդամակցության չափանիշներ.

ՀՀ այն բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնք ցանկանում են միանալ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաբաղաբականության մշակման ցանցային համագործակցության Կոնսորցիում ստեղծելու և Կոնսորցիումի Մասնակիցների կողմից համատեղ ծրագրեր իրականացնելու Համաձայնագրին, գնահատվում են հետևյալ չափանիշներին համապատասխան.

- Լեզվաբանական մասնագիտությունների և ուղղությունների առկայություն,
- Լեզվաբանական ֆակուլտետների և/կամ ամբիոնների առկայություն,
- Կոնսորցիումի համագործակցության ուղղություններով պրոֆեսորադասախոսական և գիտական կազմի առկայություն,
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարանային լեզվաբանական զրականության անհրաժեշտ միավորներ:
- 3-ից ոչ պակաս օտար լեզուների ուսուցում և 500-ից ոչ պակաս ուսանողական համակազմ

Հավելված 2՝

**ՀՀ լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության
մշակման**

**բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցային
Կոնսորցիումին միանալու մասին**

Ի դեմս՝ _____

սկսած 2010 թ.ի մայիսի _____-ից հայտարարում է ՀՀ լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցային Կոնսորցիումին միանալու մասին և սույն Համաձայնագրերը ստորագրած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ գործնական համագործակցության իրականացման համար սույն հուշագրի հավելվածում ներկայացնում է ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը: